ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇՈՒՇԱՆ ԿԱՐԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ՝ XIX ԴԱՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ
ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

АКОПЯН ШУШАН КАРЕНОВНА

АРХИТЕКТУРА ОБЩЕСТВЕННЫХ ЗДАНИЙ ГОРОДА ГЮМРИ XIX И ПЕРВОЙ ПОЛОВИНЫ XX ВВ И ЗАДАЧИ ИХ МОДЕРНИЗАЦИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01 - "Архитектура"

ЕРЕВАН 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հասայստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Մարիետտա Արտաշեսի Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Լյուբա Վլադիմիրի Կիրակոսյան

ճարտ. թեկնածու, դոցենտ Արթուր Մարտիկի Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Ա. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2021թ. հունիսի 24-ին, ժ. 15.00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈԿ-ի 029 «Ճարտարապետություն» մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցե՝ 0079, ք. Երևան, Մառի փ. 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2021թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ ճարտ. դոկտոր, դոցենտ Սարգիս Արիստակեսի Թովմասյան

Тема диссертации утвержденна в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: доктор арх., проф. Мариетта Арташесовна Гаспарян

Официальные оппоненты: доктор арх., проф. Люба Владимировна Киракосян

кандидат арх., доцент Артур Мартикович Манукян

Ведущая организация: Национальный музей-институт архитектуры им. Таманяна

Защита состоится 24-го июня 2021г., в 15.00ч. на заседании специализированного совета 029 «Архитектура» ВАК РА, действущего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г. Ереван, ул. Терьяна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра, 17/1.

С афторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 12-го мая 2021 г.

Ученый секретарь специализированного совета: доктор арх., доцент Саркис Аристакесович Товмасян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Գյումրին Հայաստանի՝ XIX դարի կոլորիտը և մշակույթը ճարտարապետության միջոցով ցուցադրող յուրօրինակ քաղաքներից է: Հայաստանի պատմության ընթացքում հաճախ կրկնվող պատերազմները, թշնամիների ներխուժումները, բնական աղետներն իրենց հետքն են թողել Գյումրու ճարտարապետության վրա և խոչընդոտել քաղաքի շարունակական զարգացումը: Այդուհանդերձ, պատմական Գյումրու ամենաբեղուն և որպես քաղաք կայանալու ամենակարևոր ժամանակաշրջանը սկսվում է XIX դարի սկզբից, երբ Գյումրին ազատագրվեց շարունակական բռնազավթումներից, և սկսեցին զարգանալ տարբեր ոլորտներ, այդ թվում՝ ճարտարապետությունը: XX դարի շարունակվող հեղափոխական ոգևորությունն էլ իր հերթին նպաստեց համաքաղաքային վերելքին: Ձևավորվեց մի համակարգ, որը զուգահեռաբար ազդում էր ժողովրդի լուսավորակրթական, հանրության արտադրական, հասարակական ու հոգևոր կյանքի զարգացման վրա, ինչն էլ իր հերթին շինարարության, ճարտարապետության վերածննդի սկիզբ էր: Այդ ժամանակաշրջանի ճարտարապետությունը մերօրյա քաղաքի կերպարի ձևավորման և ամրապնդման հիմքը հանդիսացավ՝ հասցնելով այն միջազգային մակարդակի:

Հասարակական նշանակության շենքերն անմիջական կապ ունեն մարդու առօրյա գործունեության հետ և կարևոր ու հիմնականում հաճախադեպ օգտագործվող շենքերից են, ինչի պատճառով կարիք ունեն առանձին ուսումնասիրության: Թեպետև տարբեր տեսակի հասարակական շենքեր կառուցվել են խորհրդային կարգերից սկսած, որոնք նախատեսված էին բազմամարդ խմբերի համար (օրինակ՝ մշակութային տներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն), և դրանցից շատերը նոր իմաստ էին ստացել, այնուամենայնիվ XIX դարի շենքերի ճարտարապետությունն էական հիմք դարձավ XX դարի նոր կառույցների զարգացման և քաղաքի ինքնատիպ կերպարի ձևավորման համար: Ինչ վերաբերում է արդիականացմանը, շատ դեպքերում էլ հարմարեցված վերաօգտագործման (միտված գործառույթի փոփոխությանը) հանդեպ հետաքրքրությանը, ապա այն կապված է կառույցների առկա վիճակի հետ: Պատմական քաղաքի ճարտարապետական ժառանգության դիտարկման ընթացքում բացահայտվել են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների այնպիսի օրինակներ, որոնք տարիներ շարունակ չեն շահագործվում, դրա հետ մեկտեղ չեն կոնսերվացվում՝ ժամանակի ընթացքում մեծացնելով հուշարձանի քայքայման և կորստի հավանակա-նությունը: Բացի այդ, ժամանակակից պահանջները, բնակչության թվի ավելացումը, զարգացումը հանգեցնում են պատմական կառույցների մակերեսների նորովի դիտարկմանը և ժամանակակից միջոցների կիրառմանը: Ակնհայտ է բնակիչների բարձր

կենսամակարդակի, տնտեսական, զբոսաշրջային ծրագրերի զարգացման համար հասարակական հաստատությունների ներքին ու արտաքին միջավայրի բարելավման ու ակտիվացման անհրաժեշտությունը: Այսօր առկա և հետագա պատմամշակութային հուշարձանների վերականգնմանը և տարատեսակ վերանորոգումներին առնչվող ծրագրերի իրականացման գործընթացի համար նույնպես հրատապ են թեմայի խոր հետազոտությունը և հանձնարարականների կազմումը: Այսպիսով, բացի պատմաճարտարապետական նյութերի տիպաբանական բացահայտումից, համակարգումից և ժամանակաշրջանի յուրաքանչյուր հասարակական շենքի վերլուծական հրապարակումից (ինչն իր հերթին կլրացնի հայկական ճարտարապետության պատմությունը, նյութական տվյալների տեղեկատվական հիմքը՝ շտեմարանը), գիտական աշխատանքը կծառայի շենքերի արդիականացմանը՝ դրանց հետագա օգտագործման նպատակով: Լիարժեք ուսումնասիրությունների և մասնագիտական վերլուծության բացը լրացնելուց հետո հնարավորություն կընձեռվի թեման հանրությանը և մասնագիտական շրջանակներին ներկայացնելու:

Այսպիսով, Գյումրու՝ XIX դարից մինչև XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետության վերլուծության և արդիականացման թեման այսօր, անտարակույս, հրատապ է: Այդ բարձրարժեք ժառանգությունը, որը քաղաքի ճարտարապետական դիմագիծն է ձևավորում, մասնագիտորեն լիարժեք ուսումնասիրված չէ:

Թեմայի ուսումնասիրվածությունը: Թե՛ հայ, թե՛ օտարազգի բազմաթիվ ճարտարապետների և գիտնականների հետաքրքրությունը հայկական ճարտարապետության նկատմամբ նպաստել է խնդրո առարկայի պատմության վերաբերյալ համապարփակ և համընդգրկուն գրականության ստեղծմանը, որը կարող է օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար: Սակայն տվյալ հետազոտությունը հիմնականում հիմնված է արխիվային նյութերի և տեղային զննման վրա, քանի որ XIX դարի և XX դարի առաջին կեսի՝ Գյումրի քաղաքի հասարակական շենքերին նվիրված առանձին հրատարակություններ դեռևս չկան: Հետազոտության տեղեկատվական աղբյուրները լիարժեք չեն, շատ դեպքերում կան փաստերի վերաբերյալ տարակարծություններ: Քաղաքի ճարտարապետությանը վերաբերող գրական աղբյուրներից պետք է նշել Ս. Մաթևոսյանի «XVIII-XIX դդ. Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը» աշխատությունը, Է. Տիգրանյանի «Հայ ճարտարապետների գործունեությունն Անդրկովկասում XIX դարի վերջ - XX դարի սկիզբ», ինչպես նաև XIX դարի և XX դարի սկզբի ուսումնասիրությունն Է. Տիգրանյանի ղեկավարությամբ Օ. Լազարյանի կողմից, որը, սակայն, անավարտ է մնացել: Կան նաև

Գյումրուն անդրադարձող այլ նշանավոր հեղինակների կողմից տարբեր ժամանակներում հրատարակված ակնարկներ՝ Վ. Հարությունյան, «Հայկական ճարտարապետության պատմություն», Լ. Դոլուխանյան, "Архитектура Советской Армении, 20-е годы XX века", Ա. Գրիգորյան և Մ. Թովմասյան, "Архитектура Советской Армении", որոնք ընդգրկվել են խորհրդային ճարտարապետության ընդհանուր պատմության գրականության մեջ: «Գյումրի քաղաքի ճարտարապետական զարգացումը XIX դարասկզբից մինչև Երկրորդ աշխարհամարտը» թեմայով ատենախոսական աշխատանք է կատարվել Ի. Բոյաջյանի կողմից, որն ակնհայտորեն զատորոշվում է տվյալ աշխատությունից հիմնական խնդրի սահմանումով և ուսումնասիրության օբյեկտի տարբերությամբ: Այդ ատենախոսությունը, նվիրված լինելով քաղաքի ճարտարապետության զարգացմանը, ընդգրկում է նաև հասարակական շենքերի ուսումնասիրությունը, սակայն հպանցիկ, ընդհանուր ֆոնի վրա: Քանի որ աշխատության մեջ շեշտը դրված չի եղել հասարակական շենքերի ուսումնասիրության վրա, դրա ծավալը կազմում է մինչև 15 էջ նկարագրություն: Ըստ այդմ, կարելի է գալ այն եզրահանգման, որ այս թեման լիարժեք հետազոտված չէ՝ նույնիսկ այս և բոլոր վերը թվարկած աշխատություններով հանդերձ:

Ատենախոսությունը հիմնված է մեծամասամբ արխիվային փաստաթղթերի վրա, մասնավորապես, առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում նյութեր ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության արխիվային վկայագրերից և Հայաստանի ազգային արխիվից:

Հետազոտության նպատակը՝ Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետության վերլուծությունն է և դրա արդյունքի հիման վրա շենքերի ներկա ու հետագա պահպանման և վերստին օգտագործման վերաբերյալ հանձնարարականների մշակումը:

Հետազոտության հիմնական խնդիրներն են.

- Ուսումնասիրության թեմայի շրջանակներում ընդգրկված հասարակական կառույցների վերլուծություն՝ հրապարակ հանելով դրանց՝ դիրքը քաղաքային միջավայրում, հատակագծային հորինվածքները, գործառական կազմակերպումը և ճարտարապետագեղարվեստական լուծումները,
- կառույցների պահպանվածության աստիճանի գնահատում,
- պատմական շենքերի արդիականացմանը վերաբերող աշխատանքների՝ այլ երկրներում ընդունված գործելակերպի ուսումնասիրություն,

• հարմարեցված վերաօգտագործման ենթատեքստում Գյումրու շենքերի ծավալատարածական հորինվածքների հնարավոր փոփոխությունների շրջանակի ձևավորում,

• ճարտարապետության ենթատեքստում ժամանակակից տեխնոլոգիաների ներուժի հնարավոր ազդեցության բացահայտում,

• Գյումրու պատմական կենտրոնում կառուցված հուշարձան-հասարակական շենքերի հետագա օգտագործման նպատակին ծառայող առաջարկությունների և հանձնարարականների առաջադրում:

Հետազոտության օբյեկտը՝ Գյումրի քաղաքի հասարակական շենքերի ճարտարապետական ժառանգությունը:

Հետազոտության առարկան ներառում է Գյումրիում գոյություն ունեցող այն շենքերը, որոնք կառուցվել են 19-րդ դարի վերջից 20-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում՝ որպես հասարակական շինություն և ներկայումս ունեն պատմաճարտարապետական հուշարձանի կարգավիճակ:

Ուսումնասիրության առարկա են համարվում նաև ճարտարապետական տեսակետից արժեք ունեցող առանձին հասարակական շենքերի հատակագծային և ծավալային հորինվածքները, հարդարանքը, ներքին տարածության կազմավորումը և դրանց արդիականացման ու հարմարեցված վերաօգտագործման հիմնական խնդիրները:

Հետազոտության սահմաններն ընդգրկում են Գյումրի քաղաքը՝ 19-րդ դարի վերջից 20-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության մեթոդիկան: Ճարտարապետական վերլուծությունը հիմնված է.

• գիտական գրականության և արխիվային նյութերի ուսումնասիրության,

• տվյալների, փաստագրական նյութերի, լուսանկարների հավաքագրման,

• տեղազննության վրա:

Դրա հետ մեկտեղ պատրաստվել են.

• նախագծային նյութերի և գծագրային սխեմատիկ պատկերներ,

• համաշխարհային օրինակների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ տեղեկատվություն:

Նաև կատարվել են.

• համեմատական և առանձին վերլուծություններ,

• գործնական նշանակությանը ծառայող նյութերի վավերագրում:

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատությունը խնդրո առարկա շենքերի առաջին համալիր հետազոտությունն է, որը ներառում է դրանց մասնագիտական դասակարգումն ըստ առանձնահատկությունների ու հորինվածքային լուծումների:

Ատենախոսության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Դ. Չիսլյանի գործունեությանը վերաբերող արխիվային փաստաթղթերի նոր էջեր, արխիվային այլ նախագծային նյութեր՝ համապատասխան ուսումնասիրություններով:

Բացի վերոհիշյալից, անցյալում կառուցված շենքերի արդիականացման և հարմարեցված վերաօգտագործման մեթոդի շրջանակներում վեր են հանվում ժամանակակից աշխարհում տեղ գտած «ընդլայնված իրականության» իրագործման հնարավորությունները Գյումրու ճարտարապետության մեջ:

Հետազոտության գործնական արժեքը.

- XIX դարի և XX դարի առաջին կեսի՝ ճարտարապետական արժեք ներկայացնող հասարակական շինությունների վերաբերյալ համակարգված փաստաթղթերի արխիվացում,
- նյութերի օգտագործումը քաղաքի հանրային տարածքների զարգացման ծրագրերում,
- գիտականորեն հիմնավորված նոր էջերի համալրումը ճարտարապետության պատմության մեջ,
- այս թեմայով Գյումրու պատմաճարտարապետական ժառանգության տվյալ ժամանակաշրջանի հասարակական շենքերի վերականգնման և արդիականացման խնդիրների ենթատեքստում մշակվել են գործնական նշանակության մի շարք առաջարկություններ (հանձնարարականներ), և կազմվել ուղղորդիչ նյութեր, որոնք հիմք կհանդիսանան շենքերի վերականգնմանը, հարմարեցված վերաօգտագործմանը միտված նախագծերի իրականացման համար,
- ժամանակակից տեխնոլոգիաների առաջադրում, որոնք հնարավորություն են ընձեռում տեսանելի դարձնելու արդիականացման նախագծերը վիրտուալ օբյեկտների միջոցով իրական միջավայրում՝ առանց հուշարձանի վրա միջամտություն անելու,
- տվյալ նյութերի օգտագործումը տեղեկատվական, զբոսաշրջության, գիտական ոլորտներում,
- Գյումրու պատմաճարտարապետական տվյալ ժամանակաշրջանի հասարակական շենքերի մշակութային հարուստ ժառանգության համակարգված և միասնական ներկայացումը հնարավոր է կիրառել դասավանդման գործընթացներում, ինչպես նաև հետազոտության արդյունքները կարող են հետագա ուսումնասիրությունների աղբյուր հանդիսանալ:

Շոշափվող թեմայի շրջանակներում նյութերի պակասը լրացնելու նպատակով տվյալ ատենախոսությունը ներկայացվել է Գյումրու Կումայրի արգելոց-թանգարանին և հավանություն ստացել: Աշխատության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դրված էջերը, գծագրերը, ըստ նախնական համաձայնության, պաշտպանությունից հետո կփոխանցվեն Կումայրի արգելոց-թանգարանին:

Աշխատանքի հրապարակումները և փորձահավանությունը: Ատենախոսության թեմայով տպագրվել է վեց գիտական հոդված:

Աշխատանքին վերաբերող «Ճարտարապետ Դավիթ Չիսլյանի ներդրումը Հայաստանի վերակառուցման մեջ» խորագրով ելույթը ներկայացվել է «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» 7-րդ միջազգային գիտագործնական գիտաժողովում 2015թ. (Ֆլորենցիա), իսկ ընթացիկ աշխատանքը՝ ՃՇՀԱՀ-Ի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնում 2015-2018 թթ.:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է 120 էջ տեքստային մասից, որն իր մեջ ներառում է նախաբանը հաջորդող երեք գլուխներ, եզրակացություններ, ընդհանուր եզրակացություն, 91 անվանմամբ գրականության ցանկ և հավելվածի տեսքով գրաֆիկական մասից՝ 43 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունը ներառում է հետազոտության արդիականությունը, ուսումնասիրվածությունը, նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, պարզաբանվում է մեթոդիկան, գիտական նորույթը, գործնական արժեքը, ինչպես նաև աշխատության հրապարակումները և փորձահավանությունը:

Առաջին գլխում՝ «Գյումրու քաղաքաշինական զարգացումը», ներկայացվում է Գյումրու պատմաաշխարհագրական նկարագրությունը, մեկնաբանվում է գլխավոր հատակագծի զարգացումը տարբեր փուլերում, բացահայտվում է Դ. Չիսլյանի ներդրումը շինարարական նյութերի և կոնստրուկտիվ համակարգի կիրառման մեջ՝ նկատի ունենալով քաղաքի զարգացման ուղին:

XIX դարը Գյումրու վերստին զարգացման և բնակատեղից դեպի քաղաքային տիպի բնակավայրի անցման ակնառու սկզբնաշրջանն է: Քաղաքի առաջին փաստագրական գլխավոր հատակագիծը թվագրվում է 1834-1837 թթ.՝ ի սկզբանե ունենալով չնչին թեքությամբ հյուսիսից հարավ և ուղղահայաց՝ արևելքից արևմուտք մեկնված, խաչվող փողոցների կանոնավոր-ուղղանկյուն հատակագծային ցանցի տեսք: Հաջորդող գլխա-

վոր հատակագծերում (1873, 1885, 1900, 1931-1932, 1938-1940, 1959-1961, 1989, 2005, 2007 թթ.) փողոցների կանոնավոր ցանցի սկզբունքը պահպանվել է ու զարգացել. քաղաքն ընդարձակվել է դեպի հյուսիս, հարավ, հարավ-արևելք: Ուսումնասիրությամբ արձանագրվում է նաև, որ դրա հետ մեկտեղ թաղամասերը խոշորացվել են, և, բացի դրանից, քաղաքի ընդհանուր ուղղանկյունաձև հատակագծային ցանցի կերպարում հետագայում ավելացվել են օղակաշառավղային լուծումներ:

Սկզբնաշրջանում քաղաքային համակարգը կազմված է եղել հիմնական քաղաքից և արևմտյան հատվածում լայն խրամատներով, երկու աշտարակներով բերդից (ամրոց), որոնց միջով հյուսիսից հարավ անցնում էր վտակ: Գլխավոր հատակագծի կենտրոնական առանցքից դեպի արևելք շեղված, մյուս բոլոր փողոցներից իր լայնքով առանձնացող ուղղահայաց ձգվող փողոցը տեսականորեն բաժանում էր քաղաքը ձախակողմյան և աջակողմյան մասերի, որի ձախակողմյան արևմտյան սահմանը երիզված էր քաղաքային այգով: Ի դեպ, 19-րդ դարում այդ հատվածում է տեղ գտել քաղաքային գերեզմանոցը: Քաղաքի միջով ուղղահայաց անցել է նաև մի վտակ, որը 1878 թ. ուժեղ ջրհեղեղից հետո վերցվել է ստորգետնյա ուղու մեջ: Գյումրին միջնադարյան քաղաքների պես ունեցել է հանրային կենտրոն՝ շուկա-հրապարակ, որի շուրջը և շրջակա փողոցների վրա իրենց տեղն էին գտել տարատեսակ առևտրահասարակական կառույցներ: Առհասարակ XIX դարի 2-րդ կեսին, բացի բնակելի տներից, քաղաքի կենտրոնում կառուցվել են բազմաթիվ խանութներ, արհեստանոցներ, պահեստներ, բաղնիքներ, հյուրանոցներ: Այս ժամանակաշրջանի բնանկարում մասնավորապես գերակայում էին միահարկ, տեղ-տեղ երկհարկ շենքերը:

Քաղաքի կանոնավոր փողոցային ցանցում հասարակական շենքերի դիրքը միջավայրում ունեցել է հիմնականում պարագծային կառուցապատման տեսք՝ ներառելով ճակատային և անկյունային (առանց անկյունների ակնհայտ շեշտադրման) ծավալատարածական հորինվածքներ: Պարագծային կառուցապատման գլխավոր ճակատների հորինվածքների գերակշռող մասը սիմետրիկ էր: Պահպանված օրինակներում հանդիպում են սակավաթիվ, սակայն առկա կետային լուծումներով, երբեմն նաև համալիրի մեջ վերցված կառույցներ:

Առավելապես 20-ական թթ. վերջից սկսվեց Գյումրու կառուցապատումը երկուսից ավելի հարկ ունեցող հանրային կառույցներով: Կառուցվեցին այլատեսակ գունային ճակատներով և մի քանի ոճերի համադրությամբ շենքեր: Քաղաքի տարբեր հատվածներում նոր շենքերի ճակատները 19-րդ դարին պատկանող գորշագույն տուֆի շենքերով փողոցների ճարտարապետական կերպարում տարբերակվեցին իրենց վարդագույն և դեղին գույն ունեցող տուֆերի կիրառմամբ՝ հատկապես Արթիկ տուֆի:

Այսպիսով, Գյումրու՝ 19-րդ դարի կառույցների հիմնական շինարարական նյութի արտացոլանքը սև գույնի տուֆ քարն է եղել, սակայն XIX – XXրդ դարի սկզբի ճարտարապետական զարգացման համալիր հետազոտությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ 1926 թ. տեղի ունեցած Արթիկ տուֆի քարհանքի բացման, շահագործման, ապա քարի արդյունահանման և վերամշակման մեքենայացված ձեռնարկության կազմակերպումը քաղաքին տվեց գունային նոր երանգ, ինչպես նաև հնարավորություն տվեց քարի կիրառման կոնստրուկտիվ նոր ձևի ինտեգրման, որն էլ իր հերթին ազդեցություն ունեցավ Գյումրու հետագա շինարարական աշխատանքների վրա: Դրա հետ մեկտեղ 1926 թ. երկրաշարժից հետո վերականգնման և նոր շենքերի կառուցման նախագծերում օգտագործվել են «Սեյսմակայուն շինությունների իտալական օրենքները սեյսմիկ տարածքներում» խորագրով նյութեր: Այդ կանոններում ներառված է եղել 29 կետ՝ սկսած տարածքի ընտրությունից մինչև կոնստրուկցիաներ:

Իտալական օրենքների արմատավորման, Արթիկ տուֆի վերածննդի և կիրառման կոնստրուկտիվ նոր ձևի հեղինակն էր Դ. Չիսլյանը:

Երկրորդ գլխում՝ «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի վերլուծությունը», վեր է հանվում նշված ժամանակահատվածում Գյումրու հասարակական շենքի գործառույթով կառուցված յուրաքանչյուր պահպանված հուշարձան, և վերլուծվում են ճարտարապետական առանձնահատկությունները:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում Գյումրու՝ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի հասարակական շենքերի դասակարգումը՝ վարչական կազմակերպություններ, մշակութային կենտրոններ, ուսումնադաստիարակչական, բժշկական հիմնարկներ, հյուրանոցներ, բաղնիքներ և առևտրային հիմնարկներ:

Վերլուծման ընթացքում բացահայտվել է, որ բոլոր քննարկվող հուշարձանները գլխավոր հատակագծում՝ մեծամասամբ փոքր կենտրոնում գտնվող, երբեմն նաև դրանից դուրս (Մարզպետարանի շենք, Կալինինի փ., մանկապարտեզի շենք, Իսահակյանի փ., Հյուսիսային զորամասի բժշկական համալիր Կարմիր բանակի խճուղում, զինվորական հոսպիտալ, Կոյբիշև փ., բժշկական համալիր, Սայան փ.), ունեն կառուցապատման տարբեր դիրքեր՝ ինչպես կարմիր գծով կառուցված, այնպես էլ հետ ընկած, ազատ և համալիր կազմի մեջ: Կառուցապատման համակցված եղանակների պարագայում անգամ դրանք, այնուամենայնիվ, իրար նկատմամբ ներդաշնակության մեջ են՝ հաշվի առնելով միջավայրում դիրքը, համաչափությունը, հարկայնությունը, մասշտաբը, շեշտադրումը, ռիթմը, ընդհանուր առմամբ՝ միօրինակությունը, սակայն դոմինանտների առկայությունը նույնպես:

Աշխատությունում ի հայտ է բերվել ծավալատարածական հորինվածքների տարատեսակության առկայությունը՝ ճակատային, ծավալային և խոր տարածական լուծումներով:

Հատակագծերը հիմնականում ունեցել են ճիշտ երկրաչափական ձևեր՝ և՛ Ո-աձև, և՛ Լ-աձև, և՛ ա-աձև, և՛ ուղղանկյուն՝ սիմետրիկ, ասիմետրիկ, դիսիմետրիկ լուծումներով: Արձանագրվել է ինչպես անֆիլադային, այնպես էլ միակողմանի, երկկողմանի միջանցքային հորինվածքների կիրառում: Սանդղավանդակների տեղադրությունը հորինվածքում նույնպես տարբեր է՝ տարաբաշխված, կենտրոնացված մեկ, երկու, նաև երեքի հնարավորությամբ:

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ սկզբնաշրջանում շենքի գործառնական նշանակության բացակայությունը դրդապատճառ էր որոշ գործառույթ կրող հիմնարկների զետեղմանն այլ գործառույթ կրող շենքերում (օրինակ՝ քաղաքային բանկն ու գրադարանը, մշակութային, ուսումնադաստիարակչական որոշ հաստատություններ և այլն): Նույն շենքում տարբեր գործառույթների տարանջատումը նաև կատարվել է ըստ գործառական գոտևորման հարկային բաժանման սխեմայի՝ լինելով համալիր կազմի մեջ (օրինակ՝ Սպայական ակումբը Ալեքսանդրովսկայա փողոցում, առաջին հարկում խանութի, իսկ երկրորդում ակումբի առկայությամբ):

Ճակատային հորինվածքներն ունեն և՛ սիմետրիկ, և՛ ասիմետրիկ, կենտրոնադիր ընդգծված և առանցքից շեղված լուծումներ: Թելադրող ռելիեֆը հիմք է ծառայել կիսավերգետնյա նկուղային հարկերի կառուցման համար, որոնք արտահայտված են ճակատների վրա:

Գյումրու դիտարկվող շենքերը կառուցվել են հիմնականում սև և վարդագույն տուֆից, նաև՝ դրանց զուգակցմամբ, եզակի դեպքում բազալտի (Լենինական հյուրանոց), առանձին տեղերում նաև ներկի կիրառմամբ: Արխիվային փաստաթղթերով լուսաբանվել է հատկանշական վկայություն, որ Գյումրին դեռևս 19-րդ դարում ունեցել է իրավական կանոնակարգում, ըստ որի՝ ճակատային փոփոխությունները, նույնիսկ ներկելու գույնի ընտրությունը պետք է կատարվեին թույլատրվող տիպարներից և համաձայնեցվեին իրավասու մարմինների հետ:

Շենքերի ճակատներն առանձնանում են ինչպես զուսպ, այնպես էլ շքեղ արտահայտչականությամբ: Ճակատների հորինվածքային տարրերի, դետալների վերլուծությամբ բացահայտվել են տարատեսակ լուծումներ, ինչպիսիք են՝ մակերևույթներն աշխուժացնող հաճախ կիրառված ռուստ որմածքը, միջհարկային զարդագոտիները, որմնասյուները, մետաղական կոնսոլային պատշգամբները, նախշազարդ փայտե դռները, սեպաձև քարերի առկայությունը, տեղ-տեղ

հարթաքանդակները, կիսակլոր, կամարաձև, նաև ուղղանկյունաձև վերնամասերով, երիզված շրջանակներով բացվածքները, ձևավոր պատուհանագոգերը, աղեղնաձև բարավորները, քանդակազարդ վերնասեմային մանրամասերը (դետալները), ճակտոնները, զարդաքանդակները, բացառիկ դեպքերում բարելիեֆային ֆիգուրները, ախավեղագեսը՝ քովթարի, ֆրիզի, քիվի առկայությամբ, ինչպես նաև տրամատված, ատամնաշար, նույնիսկ ստալակտիդային ձև ունեցող զարդանախշ քիվերը: Չնայած նախախորհրդային համանման մոտիվների կիրառմանը նաև խորհրդային շրջանում՝ այնուամենայնիվ կան շինություններ, որտեղ ակնհայտ նկատելի են 19-րդ դարի ճոխ հարդարանքից անցումը խորհրդային շրջանում դրանց բացակայությանը:

Կառույցների ոճական առանձնահատկությունները բազմատեսակ են՝ ընդգրկելով հայկական և ռուսական ոճերի համատեղմամբ եվրոպական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշներ: Նեոկլասիցիզմի, էկլեկտիկայի, մոդեռնի ոճերին բնորոշ կերպարանքին զուգահեռ՝ Գյումրուն հատուկ է երկու ուրույն ոճական արտահայտչականությամբ շարվածք՝ «Ալեքսանդրապոլ» և «Ղայթան դարձ»: Առաջինը՝ սև և դարչնագույն տուֆի համադրությունն է մեկ հարթության մեջ, իսկ երկրորդը՝ տուֆի և դրանց միջև սպիտակ շաղախի կապակցումը:

Երրորդ գլխում՝ «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի արդիականացման և վերաօգտագործման հիմնական խնդիրները», կատարվել է Գյումրու՝ XIX դարի և XX դարի առաջին կեսին կառուցված հասարակական շենքերի ներկա գործածելիության և իրավիճակային համախումբ գնահատում: Ուսումնասիրվել են շենքերի արդիականացման և հարմարեցված վերաօգտագործման օրինակներ, ինչպես նաև դրանց կիրառման նպատակին ծառայող ծավալատարածական հորինվածքների հնարավոր փոփոխությունների, ապա նման նախագծերը հանրությանը ներկայացնելու ժամանակակից տեխնոլոգիաների ներուժը, և առաջադրվել են հանձնարարականներ:

Հետազոտության արգասիքը Գյումրու՝ XIX դարի և XX դարի առաջին կեսին կառուցված 35 հասարակական շենքերի ներկա գործածելիության և իրավիճակային միասնական գնահատումն է: Խմբավորվել են լավ վիճակի 26, բավարար կանգուն վիճակի 4, վերականգնման ընթացքում գտնվող 4, վատթար՝ մասամբ քանդված վիճակի 3 հուշարձան: Դասդասվել են հին գործառույթով օգտագործվող 20 շինություն, փոփոխված գործառույթով՝ 12 և 7 չօգտագործվող շինություններ:

Անդրադառնալով Գյումրու շենքերի արդիականացման խնդրին՝ առաջադրվել է երկու հնարավոր տարբերակ՝ արդիականացում առանց գործառույթի փոփոխության և հարմարեցված վերաօգտագործում: Ըստ այդմ, դուրս են բերվել դրանց հիմնական

պահանջները՝ պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և ինտեգրում ժամանակակից միջավայր՝ յուրաքանչյուր պատմաճարտարապետական շինությանը տալով իրեն հատուկ ռացիոնալ գործառույթ կամ գործառույթներ:

Հաշվի առնելով, որ պատմական շենքերի տարածքները շատ դեպքերում չեն բավարարում ժամանակակից պահանջները, առաջադրվել է տարածքների ընդարձակման միտումը՝ հորիզոնական, ուղղահայաց և տարածքի սահմաններում նոր ծավալի ավելացմամբ: Ըստ այդմ, տեղազննման արդյունքում կանոնակարգված յոթ չօգտագործվող շենքերի հնարավոր ընդարձակման տարբերակներից վեցի հորիզոնական լայնարձակումը, դրանցից երկուսի դեպքում (կիսաքանդ վիճակում գտնվող, նախկինում բժշկական համալիրների մասնաշենքեր) նաև կառույցի միջավայրում նոր տարածքների ապահովումով և յոթերորդի ուղղահայաց կցակառույցի լրացմամբ ծավալվելը հնարավոր է:

Ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաների, հատկապես «ընդլայնված իրականության» մեթոդը: Այն միավորում է իրական և վիրտուալ բովանդակությունը՝ ինտերակտիվ լինելով իրական ժամանակում՝ նախապես գրանցվելով 3D-ում: Ընդլայնված իրականության կիրառումը Գյումրու ճարտարապետության մեջ հնարավորություն կտա իրական պատմամշակութային հուշարձանների վրա տեսանելի դարձնելու վիրտուալ օբյեկտներ՝ 1:1 մասշտաբով, և ապագա նախագծային միջամտությունները գնահատելու իրական միջավայրում՝ առանց հուշարձանի վրա միջամտություն կատարելու: Այն նախատեսում է տարածքի բազմակողմանի ուսումնասիրություն, ծավալահատակագծային օբյեկտների եռաչափ մոդելավորում համակարգիչների օգնությամբ, միջավայրում նախատեսվող նախագծային լուծումների իրականացում, նախագծերի «պրոտեզավորումը» գոյություն ունեցող մոդելին արդի տեխնոլոգիաների միջամտությամբ, ընկալումը՝ հեռախոսների, եռաչափ ակնոցների, ոսպնյակների կամ այլ միջոցների կիրառմամբ:

Գյումրի քաղաքի ճարտարապետաքաղաքաշինական հետագա զարգացման ուղղությունների մշակման փուլում առաջարկվում է ներգրավել հետևյալ դրույթները.

- քաղաքի հանրային կառույցների զարգացման տեսլական,
- կառույցների գործառական գոտևորում՝ ըստ շինությունների ներկա օգտագործման տեսակների սխեմայի,
- նույն տիպարին պատկանող կառույցների՝ միմյանցից հեռավորությունների կանոնակարգում,
- ըստ սահմանված գործառույթի նշանակության՝ առաջարկվում է մշակել մարդկային հոսքի մոտեցումների, հասանելիության սխեմա,

• կառույցների ծավալատարածական հորինվածքների միջավայրում հնարավորին լրացուցիչ կառուցապատման չափորոշիչների կազմում,

• արդիականացմանն ուղղված, կառուցապատման առկա պաշարների օգտագործման հնարավորությունների ամրագրում,

• շինությունների կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր գծերի պատկեր:

Գյումրի քաղաքի հարուստ պատմաճարտարապետական ժառանգությունը հաստատուն հիմք է քաղաքի զարգացման, արդիականացման գործընթացում: Ունենալով կայացած ճարտարապետություն՝ այն ամրագրում է հետագա առաջընթացին ուղղված երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող օրինաչափությունները և դրանցից բխող սահմանափակումները:

Վերոնշյալ կետերի կանոնակարգման հիման վրա հնարավոր է դառնում առաջադրել բովանդակությանը համապատասխան առաջարկություններ:

Գյումրու պատմական կենտրոնում կառուցված հուշարձան-հասարակական շենքերի գործածելիությունն ամրապնդելու և ցուցանիշը բարձրացնելու նպատակով առաջարկվում է.

• կառույցի տարածքային տեղագրության նշանակության գնահատում՝ ըստ գործառույթի (հաշվի առնել օգտագործման շառավղային կիրառությունը),

• ենթակենտրոնների ստեղծում՝ մատչելի հասանելիության միտումով՝ հաշվի առնելով հասարակական շենքերի տեղակայումը՝ ըստ դիրքի և խտության,

• քաղաքի պատմական կենտրոնի պատմաճարտարապետական և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների և տարածքների եռաչափ մոդելավորում,

• ըստ մոդելավորման՝ արդիականացման ենթակա կառույցների միջավայրային ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրում,

• առանց հանրային քննարկումների կամ/և մասնագիտական տեղային դիտարկման՝ վերակառուցման, կցակառուցման, վերնակառուցման, երեսապատման աշխատանքների արգելում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտության մեջ տեղեկատվության հավաքման և ամբողջական դիտարկման միջոցով եզրահանգվում է, որ 19-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը Գյումրու քաղաքաշինական զարգացումն ունի ամպլիտուդային գրաֆիկական տեսք, որտեղ առանձնացվում է երեք առանցքային շրջան: Առաջինը 19-րդ դարի սկիզբն է՝ բնակատեղիից դեպի քաղաքային տիպի բնակավայրի անցումը, ինչն իր դրոշմն է թողել

Գյումրու քաղաքաշինական կերպարի վրա. երկրորդ շրջանը սկսվում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով, որին բնորոշ է հասարակական կառույցների նոր տիպերի առաջացումը: Զուգահեռներ տանելով դիտարկվող ժամանակաշրջանի միջև՝ առանձնանում է նաև երրորդ բեկման կետը՝ 1926թ. երկրաշարժից հետո, երբ քաղաք հրավիրվեց Դ. Չիսլյանը, ով հեղափոխիչ ներդրում ունեցավ քաղաքի կառուցապատման թե՛ շինարարական նյութի, թե՛ կոնստրուկցիաների և թե՛ հակասեյսմիկ ներմուծությունների մեջ:

2. Հետազոտությամբ հիմնավորվել է, որ չնայած տարբեր ոճերի, չափերի, ինքնատիպության առկայությանը՝ 19-րդ դարը և 20-րդ դարի սկիզբն աչքի են ընկնում իրար ավելի նման կառույցներով, մինչդեռ հեղափոխությունից հետո այդ պատկերը փոխվում է: Հաշվի են առնվել հասարակական շենքերի ծավալատարածական հորին-վածքի սկզբունքները, ինչպես միջավայրում իրար նկատմամբ, այնպես էլ որպես առանձին կառույցներ: Ճարտարապետական հորինվածքային միջոցներն են սիմետրիան, ասիմետրիան, բազմառանցք տարբերակը, ճակատներում ռիթմի առկայությունը, նկատելի է գերիշխող և ենթակա տարրերի օգտագործումը: Ընդհանուր առմամբ ներառված տարրերի ընտրությունը, գեղարվեստական արտահայտչամիջոցները ներդաշնակ են: Շինություններն առանձին վերլուծելիս ակնհայտ է կոնտրաստի բացակայությունը, ինչը կհանգեցներ մեներանգության (մոնոքրոմության), եթե չլիներ նշված գերիշխող և ենթակա տարրերի կիրառումը: Ճակատների գերիշխող շինարարական նյութը տուֆն է, սակայն կան ներկապատած ճակատների, ինչպես նաև ավելի ուշ՝ բազալտի կիրառման օրինակներ: Հատակագծային հորինվածքները բազմազան են, ինչպես ասիմետրիկ, այնպես էլ սիմետրիկ, Լ-աձև, Ո-աձև, և-աձև, ա-աձև, ուղղանկյան տեսքով:

3. Ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված առանձին հասարակական կառույցների ճարտարապետական վերլուծության և տեղազննման ընթացքում պարզվել է, որ նույնիսկ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության արխիվային վկայագրերում ներառված շինություններից կան օրինակներ, որոնք տարիների անուշադրության պատճառով քանդվել են կամ գտնվում են վատ վիճակում՝ պահպանելով միայն պատի «կմախքներ»: Արդիականացման և օգտագործման հնարավորություն ընձեռելու նպատակով իրավիճակային միասնական գնահատում է արվել, ինչի արդյունքում շենքերը դասակարգվել են ըստ պահպանվածության՝ 74%-ը՝ լավ վիճակում գտնվող, 11%-ը՝ վերականգնման կամ վերանորոգման կարիք ունեցող, 11%-ը՝ արդեն իսկ վերականգնվող և 9%-ը՝ կիսաքանդ կառույցներ՝ վերակառուցման անհրաժեշտությամբ:

4. Արտերկրյա առաջավոր արդիականացման փորձի հիման վրա Գյումրու հասարակական շենքերի հետագա օգտագործման համար կարևորվել են հետևյալ համընդհանուր կռվանները.

- հատակագծային ճկուն լուծում,
- ֆունկցիոնալ գոտևորում՝ ընդգծված ներքին հորինվածքում,
- մի քանի գործառույթների համատեղում,
- ժամանակակից համարձակ լուծումների կիրառում,
- առանձին նոր տարրերի ժամանակակից դիզայն, քանի որ այդպիսի ներքին միջավայրերը ձգում են մարդկանց և հետ կանչում: Բացի այդ, նշվածը ներառում է արդի հարմարավետությունը, ինչին սովոր է մերօրյա մարդը,
- կառույցի լայնարձակումը կամ ճարտարապետագեղարվեստական միաձուլության լուծումը: Շատ դեպքերում առանց ժամանակակից մեծ տարածքների համադրման հնարավոր չէ հանրային շենքերը լիարժեք օգտագործել ըստ նախատեսված պահանջի: Լինում են այնպիսի օրինակներ, երբ անցյալից եկած տարածքները չեն բավարարում այսօրվա պահանջները, սակայն նման լուծումները պետք է ներդաշնակորեն զետեղվեն միջավայրի մեջ,
- հարմարեցված վերաօգտագործում:

Ըստ ուսումնասիրությունների՝ ցուցակագրվել են նաև հուշարձան-հասարակական շենքերից 57%-ը՝ հին գործառույթով օգտագործվող, 34%-ը՝ փոփոխված գործառույթով, և 20%-ը՝ չօգտագործվող: Գյումրու քննարկվող շենքերի վերաօգտագործման նպատակով, ըստ տեղազննման արդյունքների, չօգտագործվող յոթ շենքերից վեցն ունեն հորիզոնական ընդարձակման ակնհայտ հնարավորություն: Դրանցից երեքը, գտնվելով կիսաքանդ վիճակում, ունեն վերակառուցման կարիք, որի ընթացքում հնարավոր է դիտարկված այլ ընդարձակման տարբերակների կիրառումը (հորիզոնական, ուղղահայաց, տարածքում նոր ծավալի ավելացմամբ):

Հաշվի առնելով վերն ամփոփվածը՝ Գյումրու յոթ չօգտագործվող շենքի համար ամենանպատակահարմարը հարմարեցված վերաօգտագործումն է՝ հնարավոր ընդարձակման տարբերակներով: Հորիզոնական լայնարձակումը հնարավոր է վեցում, կառույցի միջավայրում նոր տարածքների ապահովմամբ՝ երկուսի, իսկ ուղղահայաց կցակառույցի լրացմամբ ընդարձակումը՝ երեքի դեպքերում:

5. Հաշվի առնելով վերոհիշյալ լայնարձակման հնարավորությունը և Գյումրու ճարտարապետական համակառույցի (անսամբլի) մեջ միջամտությամբ հնարավոր ռիսկերը՝ առաջարկվող ժամանակակից տեխնոլոգիաների՝ «ընդլայնված իրականության» ինտեգրումը (միջամտությունները տեսանյութերով քաղաքային

միջավայրում իրական չափերով ինտեգրելու միջոցով) կնպաստի հուշարձան-շենքերի վրա ճարտարապետական միջամտության առավելագույն ապահովությանը: Կանխատեսելով ապագա միտումները՝ Գյումրին կարող է պիլոտային ծրագիր լինել մյուս քաղաքների համար՝ քաղաքի պատմական շերտի վրա ակնկալվող ճարտարապետական փոփոխությունների ամբողջական վիզուալ ընկալմանն իրական ժամանակում:

6. Հետագա հետազոտությունների համար առաջարկվում է Գյումրու պատմական կենտրոնում կառուցված հուշարձան-հասարակական շենքերի գործածելիությունն ամրապնդելու նպատակին ծառայող ճարտարապետական արդիականացման ու հարմարեցված վերաօգտագործման, մակերեսների ավելացման, «ընդլայնված իրականության» օգտագործման առաջարկություններից բացի, հաշվի առնել հետագա լրացուցիչ միջոցների կիրառումը՝ գործառույթների շառավղային մոնիթորինգ (մշտադիտարկում), ենթակենտրոնների ստեղծում, քաղաքի եռաչափ մոդելավորում, կառույցների ծավալատարածական հորինվածքների միջավայրում լրացուցիչ կառուցապատման չափորոշիչների սահմանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հակոբյան Շ. «Սեյսմակայուն շինությունների իտալական օրենքների թագավորական հրամանագիրը և դրա կիրառումը Հայաստանում 20-րդ դարի սկզբին», Հայաստանի շինարարների միության տեղեկագիր, գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, h. 1, 2015, էջ 14-17:
2. Հակոբյան Շ. «Ալեքսանդրապոլի նախախորհրդային շրջանի ուսումնական հաստատությունների ձևագոյացումը և դրանց ճարտարապետությունը», ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, Երևան, h. 3, 2016, էջ 41-45:
3. Հակոբյան Շ. «Գյումրի քաղաքի XIX դարից XX դարի սկզբի հասարակական շենքերի տիպերը», Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տեղեկագիր, Երևան, h. 3, 2018, էջ 46-49:
4. Հակոբյան Շ. «Պատմական կառույցների համալրումն արդի ճարտարապետությամբ», Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տեղեկագիր, Երևան, h. 2, 2018, էջ 91-97:
5. Հակոբյան Շ. «Գյումրի քաղաքի 19-րդ դարի դրամատիկական թատրոնի շենքի արդիականացման առանձնահատկությունները», ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, Երևան, h. 3, 2018, էջ 27-32:
6. Hakobyan Sh. “Architect David Chislyan’s contribution in the redevelopment of Armenia”, Contemporary problems of Architecture and Construction, Florence, 2015, 267-272p.

АКОПЯН ШУШАН КАРЕНОВНА
АРХИТЕРКТУРА ОБЩЕСТВЕННЫХ ЗДАНИЙ ГОРОДА ГЮМРИ XIX И ПЕРВОЙ ПОЛОВИНЫ XX ВВ И ЗАДАЧИ ИХ МОДЕРНИЗАЦИИ
АННОТАЦИЯ

Гюмри является своеобразным и уникальным городом, который демонстрирует весь колорит и культуру Армении XIX века в своей архитектуре. Эпоха процветания и становления исторического Гюмри, как одного из самых важных городов, начинается с начала XIX века, когда Гюмри был освобожден от постоянных завоеваний, и когда началось развитие разных областей, одной из которых была архитектура. Революционный дух XX века поспособствовал общегородскому подъему. Была создана такая структура, которая параллельно способствовала развитию образования, общественного производства, достижений духовной и общественной жизни, что в свою очередь стало началом возрождения строительства и архитектуры. Архитектурное мышление того времени стало основой создания и укрепления образа нынешнего города, приближая его к международному уровню.

Доклад основывается на многочисленных архивных документах, в которых впервые используются материалы из архивных свидетельств Агентства по охране исторических и культурных памятников РА, а также из Национального архива Армении.

Целью данного исследования является анализ архитектуры зданий города Гюмри XIX – первой половины XX вв и разработка процедур на основе ее результатов. Конечной целью исследования является выявление практического значения в соответствии с архитектурными характеристиками, которое должно быть использовано в настоящих и последующих работах по охране и повторному использованию сооружений в рамках программы по развитию города.

Научным новшеством исследования является первое комплексное анализное исследование зданий, в которое входят их специализированная классификация по единству особенностей и структурных решений. Впервые были предоставлены начальные практические цели постройки и типологическая классификация каждого из рассматриваемых памятников. Кроме этого, в докладе впервые с научной точки зрения используются новые страницы архивных документов, а также других архивных проектных материалов, с соответствующими исследованиями, которые связаны с деятельностью Д. Числяна.

Доклад состоит из 120 страниц текстовой части, в который входят три главы после предисловия, выводы, общий вывод, список литературы из 91 наименований и графической части на 43 страницы в виде приложения.

Предисловие включает актуальность исследования, цель и задачи, объект и предмет исследования, уточняется методика, научное новшество, практическая ценность, а также публикации работы и одобрение испытаний.

В первой главе “Развитие градостроения Гюмри” упоминается историко-географическое описание Гюмри, объясняются разные этапы развития основного плана города, раскрывается вклад Д. Числяна в использовании разных строительных материалов и конструктивных систем, имея ввиду путь развития поселений в городе.

Во второй главе “Анализ общественных зданий Гюмри XIX и первой половины XX вв” поднимается тема о каждом сохраненном памятнике, построенном в данное время и функционирующее, как общественное здание, а также анализируются их архитектурные особенности.

В третьей главе “Основные задачи модернизации и повторного использования общественных зданий Гюмри XIX – начала XX вв” была сделана полная оценка ситуаций и возможности нынешней эксплуатации общественных зданий Гюмри XIX - середины XX вв. Были изучены примеры модернизации зданий и их адаптивного повторного использования, а также изменения их пространственных особенностей для дальнейшей цели использования, потенциал новейших технологий в процессе представления похожих проектов общественности и были даны соответствующие указания.

В рамках затронутой темы с целью восполнения недостающего материала, доклад был представлен в музей – заповедник Кумайри в Гюмри и получил одобрение. Все страницы, чертежи, впервые использованные в научном труде, по предварительной договоренности после защиты будут отправлены в музей – заповедник Кумайри.

HAKOBYAN SHUSHAN KAREN

THE ARCHITECTURE OF PUBLIC BUILDINGS IN THE CITY OF GYUMRI DATED 19TH – FIRST HALF OF 20TH CENTURIES AND THE MAIN TASKS OF THEIR MODERNIZATION

SUMMARY

Gyumri is a peculiar and unique city, showing with it's architecture all the color and culture of 19th century of Armenia. The era of prosperity and formation of historical Gyumri as one of the main cities, begins at the beginning of 19th century, when it was liberated from longterm conquests, thus giving rise to the development of various spheres of activity, one of which was architecture. The revolutionary inspiration in 20th century, in it's turn, contributed to the development of the city. A system was built, which at the same time contributed to the growth of education, manufactures, achievments of ecclesiastical and social life, that was the revival of construction and architecture in the city. The architectural thinking of that time became the basis for creating and strengthening the image of the nowadays city, bringing it to the international level.

The thesis is based on numerous archival documents, where materials from the archival testimonies of the Agency for the Protection of Historical and Cultural Monuments of the Republic of Armenia as well as from the National Archives of Armenia are used for the first time.

The main purpose of this study is to analyze the architecture of 19th – first half of 20th centuries buildings in the city of Gyumri and, based on the results, to develop instructions. The final objective of the study is to sequence the practical value in accordance with architectural characteristics that can be used in the current and future work of the protection and reuse of buildings within the framework of the city development program.

The scientific innovation of the study is the first comprehensive analyzed study of buildings, which includes their specialized classification according to the unity of features and structural solutions. For the first time, the initial practical goals of the construction and the typological classification of each of the sites under consideration were provided. In addition, in the thesis for the first time new pages of archival documents, as well as other archival projects' materials, with relevant studies related to D. Chislyan's researches are used from a scientific point of view.

The thesis consists of 120 pages of the text part, which includes three chapters following the preface, conclusions, general conclusion, a list of references which consists of 91 titles and a graphic part of 43 pages as an appendix.

The preface includes the relevance of the research, the main research, purpose and objectives, objects and subjects of the research, specifies the methodology, scientific innovation, practical value, as well as the publication of the work and the trial period.

The first chapter «Urban Development in Gyumri», mentions the historical and geographical description of Gyumri, narrates about different stages of the city plan development, reveals D. Chislyan's contribution to the use of various building materials and structural systems, bearing in mind the development of settlements in the city.

The second chapter «Analysis of public buildings of 19th and first half of 20th centuries in Gyumri», brings up each preserved monument, built at this time and functioning as a public building, as well as analyzes their architectural features.

In the third chapter «The main tasks of modernization and reuse of public buildings of 19th – early 20th centuries in Gyumri», a full assessment of the situations and the possibility of the current operation of public buildings of 19th – early 20th centuries was made. Examples of the modernization of buildings and their adaptive reuse, as well as changes in their spatial features for further use, the potential of the latest technologies in the process of presenting this kind of projects to the public were studied, after which appropriate instructions were given.

Within the framework of the topic, in order to fill the missing material, the thesis was presented to the Kumayri Museum – Reserve in Gyumri and received approval. All pages and drawings, first ever used in scientific work, by prior agreement after protection will be sent to the Kumayri Museum – Reserve.